ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

"__9__" __11__2012թ. № 115 Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ <<ԿԱՊԱՆԻ N 4 ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>> ԵՎ <<ԿԱՐՃԵՎԱՆԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԳՈՐԾՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի, 70-րդ հոդվածի 2-րդ կետի 1) ենթակետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի <<Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին>> ՆՀ-728 հրամանագրի 1.16 կետով և համաձայն ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության 2012թ. հաստատված աշխատանքային ծրագրի 6-րդ կետի,

կ ա ր գ ա դ ր ու մ եմ՝

1. ՀՀ Սյունիքի մարզի <<Կապանի N 4 միջնակարգ դպրոց>> և <<Կարճևանի հիմնական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպություններում ուսումնադաստիարակչական աշխատանքները և պետական հանրակրթական ծրագրերի իրագործման գործընթացն ուսումնասիրելու նպատակով ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով.

Ա.Գրիգորյան	ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի պետ /հանձնաժողովի նախագահ/.
Ն.Կարապետյան	ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի առաջատար մասնագետ.
Ս.Հակոբյան	ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի առաջին կարգի մասնագետ:

2. Հանձնաժողովին՝աշխատանքները իրականացնել վեցօրյա ժամկետում և արդյունքները ներկայացնել քննարկման:

3. ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին. ապահովել սույն կարգադրությունից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացում:

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ **Ս.ԽԱՉԱՏՐՅԱՆ**

2012թ. նոյեմբերի 9
ք. Կապան